22.07.2019

**ДОГОВОР № 14-19Р/2.122**
**на приобретение Услуг по техническому обслуживанию и ремонту СКРС «Мегафон»**

г. Ереван 22. 07. 2019 г.

**Закрытое акционерное общество «Армаэронавигация»** (ЗАО «Армаэронавигация»), именуемое в дальнейшем «Заказчик» (Армения, г. Ереван), в лице генерального директора Гаспаряна Артура, действующего на основании Устава, с одной стороны, и Общество с ограниченной ответственностью **«Фирма «Новые информационные технологии в авиации» (ООО «Фирма «НИТА»)** (Россия, г. Всеволжск) в лице генерального директора Зыкова Олега Николаевича, действующего на основании Устава, именуемое в дальнейшем «Исполнитель», с другой стороны, а вместе именуемые «Стороны» заключили настоящий Договор (далее – Договор) о нижеследующем:

**1. Предмет Договора**

1.1. Исполнитель обязуется оказать, а Заказчик принять и оплатить Услуги(далее – Услуги). по техническому обслуживанию и ремонту СКРС «Мегафон» (зав. №07708) (далее – Оборудование).

Услуги оказываются Исполнителем на основании Заявок (Актов дефектации) на оказание услуг по техническому обслуживанию и ремонту Оборудования (далее – Заявка), поданных и оформленных Заказчиком в соответствии с Приложением № 1 (Образец).

По запросу Заказчика, Исполнитель поставляет запасные части к Оборудованию (далее – Комплектующие).

1.2. По соглашению Сторон

**Պայմանագիր № 14-19Р/2.122**
**«Մեգաֆոն» ԱԿՌՍ -ի տեխնիկական սպասարկման և վերանորոգման Ծառայությունների**

ք. Երևան 22. 07. 2019թ.

**«Հայաէրոնավիգացիա» Փակ բաժնետիրական ընկերությունը** («Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ), այսուհետ՝ «Պատվիրատու») (Հայաստան, Երևան), ի դեմս գլխավոր տնօրեն Արթուր Գասպարյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ որպես «Պատվիրատու», մի կողմից և մյուս կողմից **«Ֆիրմա «Նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ ավիացիայում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը («Ֆիրմա «Նիտա» ՍՊԸ)** (Ռուսաստան, Վսեվոլժսկ), ի դեմս գլխավոր տնօրեն Օլեգ Զիկովի՝ գործող կանոնադրության հիման վրա, այսուհետ որպես «Կատարող», իսկ միասին կոչվում են «Կողմեր» կնքեցին պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

**1.Պայմանագրի առարկան**

1.1. Կատարողը պարտավորվում է մատուցել «Մեգաֆոն» (գհ. №07708) ԱԿՌՍ-ի (այսուհետ՝ Սարքավորում) տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություններ), իսկ Պատվիրատուն ընդունել և վճարել մատուցված ծառայությունների համար:

Կատարողի կողմից ծառայությունները մատուցվում են Պատվիրատուից Սարքավորումների տեխնիկական սպասարկման և վերանորոգման ծառայությունների մատուցման վերաբերյալ ձևակերպված և ներկայացված հայտի (անսարքությունների Ակտի) հիման վրա (այսուհետ՝ Հայտ)՝ համաձայն Հավելված №1-ի (Օրինակ):

Պատվիրատուի հայտի համաձայն Կատարողը մատակարարում է Սարքավորումների բաղադրամասեր (այսուհետ՝ Բաղադրամասեր):

1.2.Կողմերի համաձայնությամբ Ծառայությունները կարող են մատուցվել՝

ООО «Фирма «НИТА» Отдел К и ДД

| | |
|---|---|
| Услуги могут оказываться:<br>– путём выезда специалистов Исполнителя на место установки Оборудования, расположенное по адресу: Республика Армения, г. Ереван-0042, ул. И. Гаспаряна 33 (далее – Объект);<br>– путём отправки подлежащих ремонту блоков Исполнителю. | - Կատարողի մասնագետների մեկնումով սարքավորումների տեղակայման վայր՝ Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան-0042, Ի.Գասպարյան 33 (այսուհետ՝ Օբյեկտ) հասցեով:<br>– Կատարողին, վերանորոգման ենթակա բաղադրամասերի առաքմամբ: |
| В случае отправки блоков, все расходы, связанные с транспортировкой блоков, от Заказчика к Исполнителю оплачивает Заказчик, от Исполнителя к Заказчику оплачивает Исполнитель с последующей компенсацией Заказчиком Исполнителю фактически понесенных расходов. | Բաղադրամասերի առաքման դեպքում՝ առաքման ծախսերը Պատվիրատուից դեպի Կատարող վճարում է Պատվիրատուն, Կատարողից դեպի Պատվիրատու վճարում է Պատվիրատուն, կոմպենսացնելով Կատարողի կրած իրական ծախսերը: |
| **2. Цена и порядок расчетов** | **2. Գինը և վճարման կարգը** |
| 2.1. Стоимость Услуг и Комплектующих по каждой Заявке определяется на основании Выписки из прейскуранта на выполнение работ по текущему сопровождению и восстановительному ремонту оборудования гражданского и двойного назначения (далее – Выписка), утвержденной Исполнителем на каждый договорной год (Приложение №3). | 2.1. Յուրաքանչյուր հայտի հիման վրա մատուցված Ծառայությունների և Բաղադրամասերի արժեքը որոշվում է Կատարողի կողմից ամեն պայմանագրային տարվա համար հաստատված գնացուցակի Քաղվածքի (այսուհետ Քաղվածք) հիման վրա (Հավելված №3) նախատեսված սարքավորման ընթացիկ սպասարկման և վերանորոգման համար: |
| 2.2. Исполнитель направляет Заказчику Выписку на следующий договорной год. Если Исполнитель не направил Выписку, то расчеты осуществляются по ценам предыдущего года до момента направления новой Выписки. | 2.2. Կատարողը Պատվիրատուին ուղարկում է հաջորդ պայմանագրային տարվա Քաղվածքը: Եթե Կատարողը չի ուղարկել Քաղվածքը, այդ դեպքում հաշվարկները կատարվում են նախորդ տարվա գներով՝ մինչև նոր Քաղվածքի ուղարկելը: |
| 2.3. Стоимость Услуг и Комплектующих, не входящих в Прейскурант согласовываются дополнительным соглашением. | 2.3. Ծառայությունների և բաղադրամասերի արժեքները, որոնք ընդգրկված չեն գնացուցակում Կողմերը համաձայնեցնում են լրացուցիչ համաձայնագրով: |
| 2.4. Расходы на выезд специалистов (командировочные, проезд, проживание) оплачиваются Заказчиком отдельно, на основании документально подтвержденных | 2.4.Դեպի Օբյեկտ, աշխատանքների կատարման համար, մասնագետների այցի ծախսերը (օրապահիկը, ճանապարհածախսը, գիշերակացը) Պատվիրատուի կողմից վճարվում են առանձին, Կատարողի կողմից փաստաթղթերով հաստատված ծախսերի |

| | |
|---|---|
| расходов Исполнителя. | հիման վրա: |
| 2.5. Стороны производят сверку взаиморасчетов на основании Актов сдачи-приемки оказанных услуг (выполненных работ) и Протоколов, в срок до 30 июня каждого календарного года. В счет оплаты за выполняемые обязательства Заказчик в срок (за исключением первого и последнего года действия Договора) до 01 июля каждого года производит авансовый платеж в размере 10 000 (Десять тысяч) долларов США. Авансовый платеж за первый год перечисляется в течение 10 (Десяти) рабочих дней после подписания настоящего Договора. | 2.5. Կողմերը, մինչև յուրաքանչյուր օրացուցային տարվա հունիսի 30-ը, Մատուցված Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա իրականացնում են փոխստուգում: Իրականացվող պարտավորությունների վճարի հաշվին Պատվիրատուն, յուրաքանչյուր տարվա մինչև (բացառությամբ պայմանագրի գործողության առաջին և վերջին տարվա) հուլիսի 1-ը պետք է կատարի կանխավճար՝ 10 000 (տաս հազար) ԱՄՆ դոլար: Առաջին տարվա համար կանխավճարը պետք է փոխանցվի պայմանագիրը կնքելուց 10 աշխատանքային օրվա ընթացքում: |
| В случае, если по итогам текущего года сумма выполняемых Исполнителем обязательств меньше, чем размер аванса, перечисленного Заказчиком на текущий год, стоимость неиспользованного аванса зачитывается в счет оплаты авансового платежа за следующий год, а в случае окончания срока Договора и/или досрочного его расторжения, Исполнитель обязуется в течение 5 (Пяти) рабочих дней с даты расторжения Договора вернуть Заказчику неиспользованный аванс. | Այն դեպքում երբ կատարված ծառայությունների չափը քիչ է կանխավճարի չափից՝ չօգտագործված գումարը պետք է հաշվվի որպես հաջորդ տարվա կանխավճարի մաս, իսկ պայմանագրի ավարտի և/կամ լուծման դեպքում Կատարողը պետք է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնի չօգտագործված կանխավճարը: Պայմանագրի գործողության վերջին տարվա կանխավճարի չափը որոշում են Կողմերը, մինչև համապատասխան տարվա հունիսի 30-ը, ելնելով նախորդ ժամանակահատվածներում կատարված պարտավորությունների ծավալից և Պայմանագրի գործողության վերջին տարում Կատարողի կողմից կանխավճարի ամբողջական օգտագործման հաշվարկից: |
| Размер аванса за последний год действия Договора определяется Сторонами до 30 июня соответствующего года, исходя из объема выполненных обязательств за предыдущие периоды и из расчета полного использования суммы аванса Исполнителем за последний год действия Договора. | |
| 2.6. Оплата авансового платежа и платежей по итогам выполнения обязательств производится в установленном порядке в долларах США, посредством банковского перевода на счет, указанный Исполнителем. Код валюты: 840. | 2.6. Կանխավճարների և ծառայությունների հիման վրա կատարված վճարումները պետք է իրականացվեն ԱՄՆ դոլարով, սահմանված կարգով՝ բանկային փոխանցման միջոցով, Կատարողի կողմից նշված հաշվին: Արտարժույթի կոդը՝ 840: |
| 2.7. В цену Договора включены прибыль, а также все осуществляемые со стороны Исполнителя, с целью обеспечения выполнения Договора платежи, налоги, пошлины и прочие выплаты. | 2.7. Պայմանագրի գնի մեջ ներառվում է շահույթը և Կատարողի կողմից պայմանագիրն ապահովելու նպատակով բոլոր վճարումները, հարկերը, տուրքերը և այլ վճարներ: |
| 2.8. В цену Договора включены | 2.8. Պայմանագրի գնի մեջ ընդգրկված են նաև ոչ ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե |

ООО «Фирма «НИТА» Отдел К и ДП

| | |
|---|---|
| также налоги, подлежащие уплате в государственный бюджет Республики Армения со стороны нерезидентов, согласно налоговому законодательству Республики Армения. | վճարման ենթակա հարկերը, համաձայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության: |
| 2.9. Подлежащие уплате в государственный бюджет Республики Армения со стороны Исполнителя налоги по пункту 2.7 будут указаны в акте сдачи-приемки оказанных Услуг (выполненных работ). Обязательства по удержанию и передаче в бюджет Республики Армения вышеуказанных налогов берет на себя Заказчик, как налоговый агент. | 2.9. Կատարողի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա հարկերը՝ համաձայն 2.7 կետի կնշվեն ծառայությունների մատուցման հանձնման-ընդունման (կատարված աշխատանքների) ակտում: Վերը նշված հարկերի Հայաստանի Հանրապետության բյուջե փոխանցման պարտականությունները իր վրա պետք է վերցնի Պատվիրատուն, որպես հարկային գործակալ: |
| 2.10. Во избежание двойного налогообложения, согласно Соглашению между Правительством Российской Федерации и Правительством Республики Армения «Об устранении двойного налогообложения на доходы и имущество» Исполнителю необходимо предоставить Заказчику справку за каждый год в течение действия договора, подтверждающую его (Исполнителя) постоянное местопребывание на территории Российской Федерации, в смысле Соглашения между правительством Российской Федерации и правительством Республики Армения "Об устранении двойного налогообложения на доходы и имущество". В случае не предоставления данной справки со стороны Исполнителя, оплата услуг Исполнителя будет осуществляться согласно законодательства Республики Армения с удержанием налога на прибыль нерезидента в размере 20 процентов от дохода нерезидента. | 2.10. Կրկնակի հարկումից խուսափելու համար, համաձայն «Հայաստանի Հանրապետության Կառավարության և Ռուսաստանի Դաշնության Կառավարության միջև եկամուտների և գույքի կրկնակի հարկումը վերացնելու մասին» Համաձայնագրի Կատարողը պայմանագրի գործելու ժամանակահատվածում յուրաքանչյուր տարի պետք է պատվիրատուին տրամադրի իր (կատարողի) մշտական տեղակայումը Ռուսաստանի Դաշնության տարածքում հաստատող տեղեկանք, համաձայն Ռուսաստանի Դաշնության Կառավարության և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև «Եկամուտների և գույքի կրկնակի հարկման վերացման վերաբերյալ» Համաձայնագրի: Կատարողի կողմից տվյալ տեղեկանքի չներկայացնելու դեպքում, ծառայությունների դիմաց վճարումը կիրականացվի համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի, ոչ ռեզիդենտի շահութահարկի պահումով՝ ոչ ռեզիդենտի եկամտի 20 տոկոսի չափով: |
| **3. Права и обязанности Сторон** | **3. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները** |
| 3.1. Исполнитель обязуется: | 3.1. Կատարողը պարտավորվում է՝ |
| – оказать Услуги с надлежащим качеством и в сроки, согласованные Сторонами; | – Ծառայությունները մատուցել համապատասխան որակով և Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում,<br>– Կատարողի գտնվելու վայրում ընդունել վերանորոգման ենթակա Սարքավորումը, |

ООО "Фирма "НИТА" Отдел К и ДД

– принять Оборудование подлежащее ремонту в месте нахождения Исполнителя;

– в случае оказания Услуг путём отправки подлежащих ремонту блоков Исполнителю обеспечить сохранность Оборудования с момента его получения и до момента отправки Заказчику;

– упаковать Оборудование и (или) поставляемые Комплектующие в тару, обеспечивающую его сохранность при транспортировке соответствующим видом транспорта (ж/д, авто, авиа, почта);

– обеспечить отправку Оборудования и (или) Комплектующих по указанному Заказчиком адресу;

– осуществлять консультации посредством электронной почты по вопросам штатного функционирования Оборудования в рамках эксплуатационной документации (ЭД).

– передавать Оборудование (Комплектующие) Исполнителю в упаковке (таре), обеспечивающей его сохранность при транспортировке соответствующим видом транспорта (ж/д, авто, авиа, почта).

**3.2. Заказчик обязуется:**

3.2.1 Обеспечить пропуск на режимные объекты Заказчика специалистам Исполнителя.

3.2.2 Предоставить возможность специалистам Исполнителя на период оказания Услуг по месту нахождения Заказчика, в случае необходимости, использовать средства связи (телефон, АФТН, электронную почту, интернет) Заказчика.

3.2.3 При несчастных случаях или болезни специалистов Исполнителя в рабочее время во время командировки - организовать обеспечение его наилучшим местным медицинским лечением. Расходы по оплате лечения несет Исполнитель.

– Այն դեպքերում երբ Ծառայությունները մատուցվում են վերանորոգման ենթակա հանգույցները Կատարողին ուղարկելով՝ ապահովել Սարքավորման անվտանգ պահպանումը ստացման պահից մինչև Պատվիրատուին ետ ուղարկման պահը,

– Սարքավորումները և(կամ) Բաղադրամասերը փաթեթավորել տարայում, որը ապահովում է դրանց անվտանգ պահպանումը համապատասխան տրանսպորտային միջոցով փոխադրման ժամանակ (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, փոստ),

– Ապահովել Սարքավորումների և(կամ) Բաղադրամասերի առաքումը Պատվիրատուի նշված հասցեով,

– Իրականացնել խորհրդատվություններ էլեկտրոնային փոստի միջոցով Սարքավորումների բնականոն շահագործման խնդիրների վերաբերյալ՝ շահագործողական փաստաթղթերի (ՇՓ) շրջանակներում,

– Սարքավորումները (Բաղադրամասերը) Պատվիրատուին առաքել փաթեթավորված (տարայով), ապահովելով դրա անվտանգ պահպանումը համապատասխան տրանսպորտով տեղափոխելու ժամանակ (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, փոստ):

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1. Ապահովել Կատարողի մասնագետների մուտքը Պատվիրատուի անցագրային գոտիներ:

3.2.2. Պատվիրատուի մոտ Ծառայության մատուցման ժամանակահատվածում Կատարողի մասնագետներին Պատվիրատուի գտնվելու վայրում հնարավորություն ընձեռնել օգտագործելու կապի միջոցները (հեռախոս, AFTN, էլ. փոստ, համացանց):

3.2.3 Գործուղումների ընթացքում Կատարողի մասնագետների աշխատանքային ժամերին դժբախտ պատահարի կամ հիվանդության դեպքում կազմակերպել նրանց տեղական լավագույն բժշկական բուժումը: Բուժման ծախսերը հոգում է Կատարողը:

3.2.4. Ծառայություններ մատուցելու

Отдел К и ДД

| | |
|---|---|
| 3.2.4 Оказать содействие Исполнителю в размещении специалистов на период производства работ в гостиницах. Расходы по оплате проживания специалистов несет Исполнитель. | ժամանակահատվածում աջակցել Կատարողի մասնագետների տեղաբաշխմանը հյուրանոցներում: Մասնագետների բնակեցման ծախսերը հոգում է Կատարողը: |
| 3.2.5 Оказать содействие в организации качественного 3-х разового питания персонала Исполнителя в период выполнения работ у Заказчика, в наиболее удобное время, с минимально возможными потерями времени на дорогу до места приема пищи и обратно. Расходы по питанию специалистов несет Исполнитель. | 3.2.5. Պատվիրատուի մոտ Ծառայություններ մատուցելու ժամանակ աջակցել կազմակերպելու Կատարողի աշխատակազմի 3 անգամյա բարձր որակի սնունդ՝ աշխատանքի առավել հարմար ժամանակահատվածում, դեպի սնման վայր և ետ ճանապարհի վրա նվազագույն ժամանակի կորստով: Մասնագետների սննդի ծախսերը հոգում է Կատարողը: |
| 3.2.6 Оплачивать Комплектующие и Услуги в порядке и сроки, установленные Договором. | 3.2.6 Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում վճարել Բաղադրամասերի և Ծառայությունների համար: |
| 3.2.7 Принимать Оборудование и/или Комплектующие по соответствующим перевозочным документам и накладной. | 3.2.7 Ընդունել Սարքավորումները և/կամ Բաղադրամասերը համապատասխան տրանսպորտային փաստաթղթերի և հաշիվ-ապրանքագրի: |
| **3.3. Исполнитель вправе:** В случае невыполнения (нарушения) Заказчиком своих обязательств, предусмотренных п.п. 3.2.1 - 3.2.7 настоящего Договора, не оказывать Услуги, а начатые работы (выполнение своих обязательств по настоящему Договору) приостановить на период времени, в течение которого Заказчик не выполняет свои обязательства, при этом письменно уведомив Заказчика об изменении сроков выполнения Работ по настоящему Договору в одностороннем порядке. | **3.3. Կատարողը իրավասու է՝** Պատվիրատուի կողմից իր պարտավորությունների չկատարման (խախտման) դեպքում, համաձայն սույն պայմանագրի 3.2.1 - 3.2.8 կետերի, Կատարողը իրավունք ունի չմատուցել Ծառայություն, իսկ սկսած աշխատանքը (իրենց պարտավորությունների կատարումը համաձայն սույն Պայմանագրի) կասեցնել այն ժամանակահատվածում, որի ընթացքում Պատվիրատուն չի կատարում իր պարտավորությունները, ինչպես նաև գրավոր ծանուցելով Պատվիրատուին սույն պայմանագրով աշխատանքի կատարման ժամկետները միակողմանիորեն փոխելու մասին: |
| **4. Порядок и сроки оказания Услуг** | **4.Ծառայությունների մատուցման կարգը և ժամկետները** |
| 4.1. Срок оказания Услуг и поставки Комплектующих согласовывается Сторонами в каждом конкретном случае отдельно в соответствии с Заявками, и не должен превышать 60 (Шестидесяти) рабочих дней с момента получения Исполнителем Заявки | 4.1. Ծառայությունների մատուցման և Բաղադրամասերի առաքման ժամկետները ամեն մասնավոր դեպքում, համաձայն առանձին Հայտերի, համաձայնեցնում են Կողմերը և չպետք է գերազանցեն 60 (վաթսուն) աշխատանքային օրը՝ Կատարողի կողմից Հայտի և/կամ Սարքավորման ստացումից հետո պայմանով, որ վերանորոգման |

| | |
|---|---|
| и/или Оборудования, при условии направления Оборудования в ремонт в срок не более 5 (Пяти) рабочих дней после направления Заявки, за исключением нетиповых случаев, требующих выполнения специальных работ (подготовка и проведение стендовых испытаний, подачи нестандартных входных сигналов, нестандартного внутреннего взаимодействия комплекса изделий и т. п.). При возникновении таких нетиповых случаев срок восстановления согласовывается Сторонами отдельно. | ուղարկված Սարքավորումը առաքվել է Հայտի հղումից ոչ ուշ քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ հատուկ աշխատանք պահանջող ոչ տիպային դեպքերի (նախապատրաստական և ստենդային փորձարկման, մուտքային ոչ ստանդարտ ազդանշանների համակցման, սարքերի ներքին, ոչ ստանդարտ փոխգործակցության և այլն): Այդպիսի ոչ տիպային դեպքերի ծագման դեպքում վերականգնման ժամկետները կողմերի միջև համաձայնեցվում են առանձին: |
| 4.2. Отремонтированное или замененное оборудование поставляется согласно условиям «Incoterms 2010, CIP» установленным Международной торговой палатой, Республика Армения, до таможенного терминала аэропорта «Звартноц» г. Ереван. | 4.2. Վերանորոգված կամ փոխարինված սարքավորումներն առաքվում են միջազգային առևտրի պալատի կողմից սահմանված «Incoterm 2010, CIP» պայմաններով, Հայաստանի Հանրապետություն, մինչև ք. Երևան, «Զվարթնոց» օդանավակայանի մաքսային տերմինալ: |
| 4.3. Оказание Услуг на Объекте осуществляется Исполнителем в объеме и в сроки, согласованные с Заказчиком. | 4.3. Օբյեկտում Կատարողի կողմից Պատվիրատուի հետ համաձայնեցված Ծառայությունների մատուցումը կատարվում է նախատեսված չափով և ժամկետներում: |
| 4.4. Исполнитель после оказания Услуг направляет в адрес Заказчика Акт (технический) оказанных услуг по обслуживанию Оборудования по форме Приложения № 2 (Образец) (далее – Акт технический) для подписания представителем Заказчика. | 4.4. Ծառայությունների մատուցումից հետո Կատարողը Պատվիրատուին է ուղարկում Սարքավորումների սպասարկման Ծառայությունների Ակտ (տեխնիկական) համաձայն հավելված №2-ի (Օրինակ) (այսուհետ՝ Տեխնիկական Ակտ) Պատվիրատուի ներկայացուցչի կողմից հաստատելու համար: |
| 4.5. Заказчик в течение 5 (Пяти) рабочих дней после получения отремонтированных блоков на месте установки, подписывает Акт технический или направляет Исполнителю мотивированный отказ от его подписания, с указанием претензий по оказанным Услугам. | 4.5 Պատվիրատուն, վերանորոգված հանգույցները տեղակայման վայրում ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում է տեխնիկական ակտը կամ Կատարողին է ուղղում չստորագրելու հիմնավորված պատճառը, նշելով մատուցած ծառայությունների մասով դժգոհությունները: |
| Вместе с подписанием Сторонами Акта технического оформляется Акт оказанных услуг (выполненных работ), счет/фактура. | Կողմերի միջև տեխնիկական Ակտի ստորագրման հետ մեկտեղ կազմվում է մատուցված ծառայությունների (կատարված աշխատանքների) Ակտ, հաշիվ / ապրանքագիր: |
| ***Примечание:*** *Исполнитель планирует расходы на оказание Услуг по одной Заявке* | ***Նշում.*** *Կատարողը նախատեսում է մեկ դիմումի մեջ ընդգրկված Ծառայությունների մատուցման ծախսերը իրականացնել* |

ООО "ФИРМА "НИТА" Отдел К и ДД

| | |
|---|---|
| *в один приезд технических специалистов. В случае если по вине Заказчика за один приезд технических специалистов Услуги могут быть не оказаны (неготовность оборудования, неподготовленность места и т.п.), то расходы по организации дополнительной командировки для окончания работ несет Заказчик, сроки выполнения и стоимость Услуг в этом случае определяется отдельным соглашением.* | *տեխնիկական մասնագետների մեկ այցի ընթացքում: Այն դեպքերում երբ Պատվիրատուի մեղքով տեխնիկական մասնագետների մեկ այցի շրջանակներում Ծառայությունները չեն մատուցվում (սարքավորումների և աշխատանքային տեղի անպատրաստություն և այլն), ապա աշխատանքները ավարտին հասցնելու համար լրացուցիչ գործուղման կազմակերպման ծախսերը կրում է Պատվիրատուն, որի դեպքում աշխատանքների արժեքը և կատարման ժամկետները որոշվում են առանձին համաձայնագրով:* |
| Исполнитель не несет ответственности и не оказывает Услуги в отношении повреждений Оборудования, не оговоренных в Заявке. | Կատարողը պատասխանատվություն չի կրում և Ծառայություններ չի մատուցում Հայտով չսահմանված Սարքավորումների վնասվածքների նկատմամբ: |
| В случае наличия таковых повреждений, Исполнитель устанавливает характер и степень повреждений Оборудования, и по согласованию с Заказчиком оказывает Услуги по Протоколу. | Նման վնասվածքների առկայության դեպքում Կատարողը սահմանում է Սարքավորման վնասի բնույթն ու չափը, համաձայնեցնելով Պատվիրատուի հետ մատուցում է Ծառայություններ համաձայն Արձանագրության: |
| **5. Ремонт или замена неисправных узлов** | **5. Խափանված հանգույցների վերանորոգում կամ փոխարինում** |
| 5.1. Исполнитель имеет право изменить или заменить тип поврежденного оборудования без ухудшения качества и функций оборудования. | 5.1. Կատարողն իրավունք ունի փոփոխություն կատարելու սարքավորման մեջ կամ փոխարինելու խափանված սարքավորման տիպը՝ պահպանելով սարքավորման որակը և գործառույթները: |
| 5.2. Количество подлежащего ремонту или замене оборудования в течение срока действия Договора неограниченно. | 5.2. Վերանորոգման կամ փոխարինման ենթակա սարքավորման քանակը պայմանագրի գործողության ընթացքում անսահմանափակ է: |
| **6. Гарантии** | **6.Երաշխիքներ** |
| 6.1. Гарантия на оказанные Исполнителем Услуги составляет 6 (Шесть) месяцев с момента подписания Сторонами Акта технического. | 6.1. Կատարողի կողմից մատուցված Ծառայության երաշխիքը կազմում է 6 (Վեց) ամիս՝ Կողմերի միջև տեխնիկական Ակտի ստորագրման պահից: |
| 6.2. Гарантия на поставленные Комплектующие составляет 6 (Шесть) месяцев с момента подписания Сторонами Акта сдачи-приемки оказанных услуг (выполненных работ), но не более гарантийного срока, установленного производителем покупных | 6.2. Մատակարարված Բաղադրամասերի Երաշխիքային ժամանակահատվածը կազմում է 6 (վեց) ամիս՝ Կողմերի միջև մատուցված Ծառայությունների (կատարված աշխատանքների) հանձնման-ընդունման Ակտի ստորագրման պահից, բայց ոչ ավելի քան գնված բաղադրամասերի համար արտադրողից տրված երաշխիքային ժամկետից, Պատվիրատուի կողմից |

| | |
|---|---|
| Комплектующих, и при условии соблюдения Заказчиком правил эксплуатации. | շահագործման կանոնները պահպանելու պայմանով: |
| 6.3. Определение причин неисправностей или отказов Оборудования в период срока гарантийного обслуживания в спорных ситуациях осуществляется комиссией с участием представителей Сторон. По результатам расследования и установления причин неисправностей и отказов Оборудования комиссией составляется акт с установлением виновной стороны. В случае если Стороны не придут к согласию о причинах отказа Оборудования, возможно привлечение независимой экспертизы. | 6.3. Երաշխիքային սպասարկման ժամանակահատվածում, վիճելի իրավիճակներում սարքավորումների անսարքության կամ խափանման պատճառների որոշումը պետք է իրականացվի Կողմերի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից: Համաձայն հանձնաժողովի քննության արդյունքների՝ սարքավորումների անսարքության և խափանման պատճառների բացահայտման հիման վրա կազմվում է ակտ՝ մեղավոր կողմի նշմամբ: Սարքավորումների խափանման պատճառների մասով Կողմերի միջև համաձայնության չգալու դեպքում կարող է ներգրավվել անկախ փորձաքննություն: |
| **7. Технический контроль за исполнением Договора** | **7. Պայմանագրի կատարման տեխնիկական վերահսկողությունը** |
| 7.1. Заказчику предоставляется право осуществления технического контроля за исполнением Договора в течение всего периода действия Договора. | 7.1. Պայմանագրի գործողության ամբողջ ժամանակահատվածում Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրի կատարման տեխնիկական վերահսկողության: |
| 7.2. Представители Заказчика имеют право в любое время присутствовать при оказании Услуг. | 7.2. Պատվիրատուի ներկայացուցիչները ցանկացած ժամանակ իրավունք ունեն ներկա լինելու մատուցվող Ծառայությունների ժամանակ: |
| 7.3. С целью наблюдения за ходом работ и обеспечения со своей стороны технического контроля, а также с целью координации работ, Заказчик назначает руководителя программы (контактная персона), данные которого приведены в пункте 15 данного Договора. | 7.3. Աշխատանքների կատարման գործընթացը վերահսկելու և մատուցվող Ծառայությունների մասով տեխնիկական վերահսկողությունն ապահովելու, ինչպես նաև աշխատանքները համակարգելու նպատակով Պատվիրատուն նշանակում է ծրագրի ղեկավար (կոնտակտային անձ), որի տվյալները բերված են սույն Պայմանագրի 15-րդ կետում: |
| 7.4. В случае проведения технического контроля на территории Исполнителя, последний обязан обеспечить необходимые рабочие условия для осуществления контроля со стороны Заказчика. | 7.4. Կատարողի տարածքում տեխնիկական վերահսկողություն իրականացնելու դեպքում վերջինս պարտավոր է ապահովել անհրաժեշտ աշխատանքային պայմաններ Պատվիրատուի կողմից վերահսկողություն իրականացնելու համար: |
| **8. Обстоятельства непреодолимой силы (форс-мажор)** | **8. Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս-մաժոր)** |
| 8.1. За полное или частичное | 8.1. Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն |

ООО «Фирма «НИТА» Отдел К и ДД

| | |
|---|---|
| невыполнение обязательств по настоящему Договору или заключаемым на его основе соглашениям Стороны освобождаются от ответственности, если это было следствием воздействия непреодолимой силы, которая возникла после заключения настоящего Договора и которую Стороны не могли предвидеть или предупредить. К таким событиям относятся землетрясение, наводнение, пожар, война, объявление военного или чрезвычайного положения, политические волнения, забастовки, приостановка работы средств коммуникации, акты государственных органов и т.д., повлекшие за собой невозможность исполнения обязательств по настоящему Договору. Если воздействие непреодолимой силы длится больше чем 3 (три) месяца, то каждая из Сторон имеет право расторгнуть Договор, заранее уведомив об этом другую Сторону. | ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել։ Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը։ Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին։ |
| **9. Ответственность Сторон** | **9. Կողմերի պատասխանատվությունը** |
| 9.1. Стороны обязуются добросовестно и в полном объеме исполнить взятые на себя Договором обязательства. | 9.1. Կողմերը պարտավորվում են բարեխղճորեն և ամբողջությամբ կատարել Պայմանագրով ստանձնած պարտավորությունները։ |
| 9.2. Не предусмотренные Договором, однако, необходимые для исполнения Договора обязательства, невыполнение которых может привести к неисполнению Договора или его исполнению ненадлежащим образом, Стороны могут взять на себя самостоятельно или по требованию другой Стороны Договора. | 9.2. Պայմանագրի կատարման համար անհրաժեշտ, սակայն Պայմանագրով չնախատեսված ծառայությունները, որոնց չկատարումը կարող է հանգեցնել Պայմանագրի խախտմանը կամ դրա ոչ պատշաճ կատարմանը, Կողմերը կարող են իրականացնել ինքնակամ կամ Պայմանագրի մյուս Կողմի պահանջով։ |
| 9.3. Сторона, за неисполнение в срок взятых на себя договорных обязательств обязана выплатить другой Стороне Договора пени в размере 0,05% от стоимости неисполненного обязательства за каждый календарный день просрочки. Размер пеней не может превышать 10% от стоимости неисполненного обязательства. | 9.3. Կողմը՝ ստանձնած պայմանագրային պարտավորությունները ժամանակին չկատարելու դեպքում պարտավոր է վճարել տույժ Պայմանագրի մյուս Կողմին, չկատարած պարտավորությունների յուրաքանչյուր ուշացված օրվա համար արժեքի 0.05% չափով։ Տույժի չափը չի կարող գերազանցել չկատարված պարտավորությունների գնի 10%-ը։ |
| 9.4. Исчисленные в установленном порядке со стороны Заказчика пени и (или) штрафы исчисляются и зачисляются из | 9.4. Սահմանված կարգով, Պատվիրատուի կողմից հաշվարկված տույժը և (կամ) տուգանքը հաշվարկվում և հաշվեգրվում են վճարվող գումարներից։ |

| | |
|---|---|
| выплачиваемых сумм. | |
| 9.5. В случаях, не предусмотренных настоящим Договором, за неисполнение или исполнение ненадлежащим образом обязательств, Стороны привлекаются к ответственности в порядке, установленном законодательством Российской Федерации. | 9.5. Սույն պայմանագրով չնախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում, Կողմերը ըստ կարգի՝ Ռուսաստանի Դաշնության սահմանված օրենքների ենթարկվում են պատասխանատվության: |
| 9.6. Выплата пени и штрафов не освобождает Стороны от исполнения своих договорных обязательств. | 9.6. Տույժերի և տուգանքների վճարումը Կողմերին չի ազատում պայմանագրային պարտավորությունները կատարելուց: |
